ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«28» հունիսի 2024 թ.

№ 20-Ա

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
Հեռ.՝ +(374 11) 518 304
Էլ. փոստ՝ erebouni@yerevan.am

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Որոշման ընդունման համար հիմք հանդիսացած փաստերը.

Երևանի քաղաքապետարանի և «Նեպա» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2024 թվականի մայիսի 20-ին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-24/21» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա դիմաց:

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 29-ից Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Էդուարդ Մնացականի Թորոսյանը:

Միևնույն ժամանակ Էդուարդ Մնացականի Թորոսյանը 2020 թվականի հունիսի 11-ից մինչև օրս հանդիսանում է նաև «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊ ընկերության տնօրեն և բաժնետեր, իսկ «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02286211) 2022 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև 2025 թվականի ապրիլի 22-ը (ցանկից դուրս է եկել 2023 թվականի մարտի 11-ից մինչև 2023 թվականի հունիսի 30-ը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԵԴ/ 6931/02/23 որոշման հիման վրա) ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ...:»

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի գ) մասի համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական

նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ:

Համաձայն Կարգի 119-րդ կետի 3-րդ ենթակետի գ) մասի՝ ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝ նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ,

Ընդ որում՝ Կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: (...):

Պայմանագրի 8.3 կետի համաձայն այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Ընկերության բաժնետեր և տնօրեն Էդուարդ Մնացականի Թորոսյանի և «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն: Այսպիսով, «Նեպա» ՍՊ ընկերության և «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊ ընկերության միջև նույնպես առկա է փոխկապակցվածություն, քանի որ երկու ընկերությունների գործադիր տնօրենը հանդիսանում է միևնույն անձը

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը՝ ղեկավարվելով Պայմանագրի 8.3 կետի պահանջով,

ինչպես նաև վերը նշված իրավական հիմքերով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի հունիսի 27-ին և պայմանագիրը հունիսի 28-ի դրությամբ համարվում է լուծված:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում...»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով, նույն հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Նեպա» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը:

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՅԱՆ

28 հունիսի, 2024թ.
Երևան